509

1

„26“ ԱՆՎԱՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ЗАКАВКАЗСКИЙ КОММУНИСТИЧЕСКИЙ УНИВЕРСИТЕТ ИМЕНИ „26“

ԱԿՆՀԵՏ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
Заочный Коммунистический университет при З. К. У.

ԿՈՒՐՍ II. 1929 թ. ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ № 1.

ՊԱՏՄԱԿԱՆ ՄԱՏԵՐԻԱԼԻԶՄ.

ИСТОРИЧЕСКИЙ МАТЕРИАЛИЗМ

Թեմա. „ՄԱՏԵՐԻԱԼԻԶՄ ՅԵՒ ԻԴԵԱԼԻԶՄ“

ԹԵՄԱՅԻ ԲՆՈՒՅԹԱԳԻՐԸ.

Փիլիսոփայության հիմնական խնդիրն է հանդիսանում այն հարցը, թե մտածողությունն ինչ հարաբերության մեջ է գտնվում կեցության հետ։ Թեմայի խնդիրների մեջ է մտնում ցույց տալ, թե ինչպես են վճռում այդ պրոբլեմը մատերիալիզմն ու իդեալիզմը, որոնք փիլիսոփայության յերկու հիմնական ուղղություններն են հանդիսանում։

Մատերիալիզմը, միանգամայն համաձայն բնագիտության հետ, որպես նախնական տվյալ վերցնում է նյութը, յերկրորդական տեղը տալով գիտակցությանը։ Իդեալիզմը առաջին տեղը տալով հոգուն, դրանով հարում է աշխարհի ստեղծագործության մասին յեղած կրոնական պատկերացումներին և անխուսափելիորեն հակասության մեջ է մտնում բնական գիտությունների հետ։ Դիալեկտիկական մատերիալիզմը յելնում է նյութից, որպես օբյեկտիվ, մեզնից անկախ գոյություն ունեցող իրականությունից, որն ազդում է մեր զգայարանների վրա։ Իդեալիզմն, այսպես թե այնպես, հանգում է ընդհակառակը արտաքին նյութական աշխարհի բացասմանը։

Այդպիսի համեմատական քննության հետևանքով դուրս բերելով իդեալիստական ուսմունքների սխալությունը, առաջադրությունն այնուհետև պարզում է ժամանակակից իդեալիզմի ռեակցիոն բնույթը՝ որպես աշխատավորների գիտակցությունը մթագնող մի գործիք իշխող դասակարգերի ձեռքում։

Դրա հետ զուգընթաց առաջադրության մեջ տրվում է դիալեկտիկական մատերիալիզմի դրույթների հիմնավորումը փիլիսոփայական մի շարք կարևոր հարցերում։ Այստեղ, ամենից առաջ, անհրաժեշտ է պարզել, թե դիալեկտիկական մատերիալիզմն ինչ հայացք ունի գիտակցության և նյութի միջև յեղած փոխհարաբերության վերաբերմամբ։ Կարելի յե արդյոք գիտակցությունը նույնացնել նյութի հետ թե՞ նա նյութի մի առանձին հատկությունն է, վորը չի կարելի անջատել առանց միաժամանակ վոչնչացնելու և կորցնելու նրա առանձնահատկությունը, նյութի այդ ուրույն հատկությունը։ Այս հարցի հետ կապակցվում է նաև մի այլ հարց. արդյոք ամեն վիճակի մեջ նյութն ունի՞ գիտակցության կամ զգացողության ընդունակություն։ Առաջադրությունը ցույց է տալիս, վոր այս հարցը միակ իր ճիշտ լուծումը գտնում է դիալեկտիկական մատերիալիզմի մեջ։ Նույնպիսի դիալեկտիկական լուծում է պահանջում նաև բացարձակ և հարաբերական ճշմարտության հարցը։ Դիալեկտիկական մատերիալիզմն ընդունում է մարդկային գիտելիքների պայմանականությունն ու հարաբերականությունը, սակայն միևնույն ժամանակ, հակառակ մախիստներին և այլ դրանց նման իդեալիստներին, նա ընդունում է օբյեկտիվ ճշմարտությունը, և հետևաբար, այդ չափով էլ, բացարձակ ճշմարտությունը։ Ակներև է, վոր հարցի դիալեկտիկական լուծումը պիտի կայանա այդ հակադիր տեսակետների միացման մեջ, վորոնցից յուրաքանչյուրն առանձին վերցրած չի պարունակում իր մեջ ամբողջ ճշմարտությունը։ Այնուհետև առաջադրության մեջ քննվում է պրակտիկայի հարցը, վորպես իմացականության ճշտության կրիտերիում։ Մի քանի իդեալիստական ուսմունքներ ժխտում են օբյեկտիվ աշխարհի իմացականության հնարավորությունը։ Դիալեկտիկական մատերիալիզմը հերքում է այդ սխալ տեսակետները։ «Այն հարցը, թե մարդկային մտածողությունն ընդունա՞կ է ճանաչել առարկաներն այն դրությամբ, ինչպես նրանք գոյություն ունեն իրականության մեջ, բնավ տեսական հարց չէ, այլ գործնական։ Գործնականով պետք է մարդ ցույց տա իր մտածողության ճշմարտությունը» (Մարքս—«Թեզիսներ Ֆեյերբախի մասին»)։ Իդեալիզմի մեջ թեորիան ու պրակտիկան անջատված են մեկը մյուսից, ընդհակառակը դիալեկտիկական մատերիալիզմի մեջ թեորիան ու պրակտիկան միացած են իրար հետ։ Պրակտիկան հիմք է ծառայում թեորիային, սակայն միաժամանակ նա լուսաբանվում է թեորիայով։ «Առանց հեղափոխական թեորիայի չի կարող գոյություն ունենալ նաև հեղափոխական շարժում»։ Դիալեկտիկական մատերիալիզմը պրոլետարիատի միակ գիտական ու հեղափոխական աշխարհահայացքն է։ Մարքսիստական փիլիսոփայության բացասումն ու խեղաթյուրումը հանգեցնում են, այդպիսի պատճառով, օպորտունիզմին գործնականում։ Կոմունիզմը մարտական մատերիալիզմի պրոպագանդ է մղում, անողոք կերպով պայքարելով մարքսիստական փիլիսոփայության ամեն տեսակի խեղաթյուրումների դեմ։

Առաջադրության նպատակը։

1. Պարզել մտածողության և կեցության միջև յեղած փոխհարաբերության հարցի նշանակությունը և քննել նրա լուծումը մատերիալիզմի ու իդեալիզմի մեջ։

2. Իմացականության հարցի քննումը մատերիալիզմի ու իդեալիզմի մեջ։

3. Պարզել հեղափոխական մարքսիզմի՝ հօգուտ դիալեկտիկական մատերիալիզմի մղած պայքարի անհրաժեշտությունը։

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА ՀՍՍՌ Арм.ССР

Թեմայի մշակման պլանը.

1. Փիլիսոփայության յերկու հիմնական գիծը—մատերիալիզմ և իդեալիզմ։ Նյութի, մատերիայի նախնականությունը մատերիալիզմում և հոգունը՝ իդեալիզմում։ Իդեալիզմ և կրոնական պատկերացում տիեզերքի ստեղծագործության մասին։ Նյութը, վորպես օբյեկտիվ իրականություն, վորն այսպես թե այնպես ազդում է մեր զգայարանների վրա։ Մտածողությունը վորպես բարձր կազմակերպված նյութի առանձին հատկություն։ Դիալեկտիկական մատերիալիզմն ընդունում է նյութի և գիտակցության վոչ թե նույնությունը, այլ միասնությունը։

«Կեցությունը վորոշում է գիտակցությունը»։ Գիտակցությունը վորպես օբյեկտիվ նյութական աշխարհի արտացոլում մարդկային գլխում։ Իդեալիզմ և գիտակցության պրիմատը։ Իդեալիզմ և օբյեկտիվ աշխարհի մեջ օրինականություն ու պատճառականություն մտցնելու ուսմունքը։

Օբյեկտիվ ու սուբյեկտիվ իդեալիզմ։ Իդեալիզմը վորպես «ղիպլոմավորված տերտերականություն»։ Դուալիստական լուծումն այն հարցի, թե մտածողությունն ինչ հարաբերություն ունի կեցության հետ։

Ուժանդակ հարցեր	Գրականություն	Մեթոդիկ ցուցումներ
1. Ինչու իդեալիզմն ու մատերիալիզմը փիլիսոփայության յերկու հիմնական ուղղություններն են համարվում։ 2. Ինչի՞ մեջ է կայանում իդեալիզմի կապը կրոնական պատկերացումների հետ։ 3. Վորոնք են իդեալիզմի հիմնական տեսակները և ինչումն է կայանում իդեալիզմի սնանկությունը։ 4. Ի՞նչպես է բնորոշում դիալեկտիկական մատերիալիզմը նյութի հասկացողությունը։ 5. Ի՞նչ է նշանակում նյութի և գիտակցության միասնություն դիալեկտիկական մատերիալիզմում։	Семковский — «Марксистская хрестоматия». Изд. 6-е. «Что такое материализм», стр. 647—648. Семковский — «Марксистская хрестоматия» — «Корни идеалистич. философ.» стр. 656—660 *Бухарин*—«Теория историч. материализма», изд. 6-е, § 1[illegible] (без мелкого шрифта) стр. 51—56.	Սույն բաժնի մշակման ժամանակ անհրաժեշտ է ուշադրության առնել հետևյալ դիտողությունները. ա) Պարզել, վոր բացի մատերիալիզմի ու իդեալիզմի հիմնական ուղղություններից, յուրաքանչյուր յերրորդ ուղղություն իրենից ներկայացնում է վորպես էկլեկտիզմ, այսինքն իդեալիզմի ու մատերիալիզմի անմիջական խառնուրդ։ բ) Յերրորդ հարցի նկատմամբ, վորպես օբյեկտիվ իդեալիզմի փիլիսոփայության օրինակ, կարելի յե բերել Հեգելին, սուբյեկտիվ իդեալիզմի օրինակ՝ Յումին և Կանտին. (օգտագործել կտորներ Պլեխանովից ու Էնգելսից)։ գ) Նյութի հասկացողությունը պարզաբանելիս անհրաժեշտ է ուշադրությունը կենտրոնացնել այն տարբերութ. վրա, վոր գոյություն ունի մա-

Ուժանդակ հարցեր	Գրականություն	Մեթոդիկ ցուցումներ
6. Արդյոք յուրաքանչյուր նյութ ընդունակ է մտածելու։ 7. Ի՞նչ է նշանակում՝ կեցությունը վորոշում է գիտակցությունը։ 8. Ի՞նչ տեսակետներ ունեն մատերիալիզմն ու իդեալիզմը տիեզերքի պատճառականության ու օրինականության նկատմամբ։ 9. Պարզեցեք իդեալիզմի ռեակցիոն դերը։	Бухарин—«Теория историч. материализма» § 20, стр. 58—62. Семковский—«Марксистская хрестоматия». «Об'ективная закономерность в природе», стр. 654—656.	տերիալիզմի և սուբյեկտիվ իդեալիզմի (մախիզմի) տեսակետների միջև։ դ) Զնայելով դիալեկտիկայի հարցերը կազմում են հետևյալ առաջադրության բովանդակությունը, այնուամենայնիվ այս բաժնի մեջ անհրաժեշտ է սկզբնական ընդհանուր հասկացողություն դիալեկտիկայի մասին, մանավանդ յերբ քննության պիտի առնենք սույն առաջադրության 5-րդ, 6-րդ, 12-րդ և 16-րդ հարցերը։

II. Դիալեկտիկական մատերիալիզմ և աշխարհը ճանաչելու սկզբունքային հնարավորությունը։ Ոբյեկտիվ, բացարձակ և հարաբերական ճշմարտություն։ Արտաքին աշխարհի ներգործությունը մեր զգայարանների վրա վորպես իմացականության աղբյուր։

Փորձնական տվյալները մտածողությամբ վերամշակելու անհրաժեշտությունը։ Պրակտիկան վորպես իմացականության ճշտության կրիտերիում։ Իդեալիստական մի շարք դպրոցներ, և ոբյեկտիվ աշխարհը ճանաչելու հնարավորության բացատրումը (Յում, Կանտ)։ Իդեալիզմը գիտակցության սահմաններից այն կողմ չի անցնում։ Թեորիայի և պրակտիկայի բաժանումը իդեալիզմի մեջ և նրանց միասնությունը դիալեկտիկական մատերիալիզմում։

Ուժանդակ հարցեր	Գրականություն	Մեթոդիկ ցուցումներ
10. Վո՞րն է մարդկային իմացականության պրոցեսի մատերալիստական բացատրությունը։ 11. Գոյություն ունի՞ արդյոք ոբյեկտիվ ճշմարտություն։ 12. Ինչպես է վրճռում մարքսիզմը բացարձակ և հարաբերական ճշմարտության հարցը։	Семковский—«Марксистская хрестом.». «Абсолютная и относительная истина», стр. 592.	Սույն բաժնում անհրաժեշտ է նշել հետևյալ մոմենտները. ա) Անհրաժեշտ է պարզել, վոր մատերիալիզմի ընդունելը շաղկապված է ոբյեկտիվ ճշմարտության ընդունելու հետ և, ընդհակառակը, ոբյեկտիվ ճշմարտության բացասումը նշանակում է նահանջ մատերիալիզմից.

Ուժանդակ հարցեր	Գրականություն	Մեթոդիկ ցուցումներ
13. Ցույց տվեք իդեալիստական ուսմունքների սխալությունը, վորոնք բացասում են ոբյեկտիվ աշխարհի ճանաչելիությունը։ 14. Վո՞րն է պրակտիկայի դերը մարդկային իմացականության մեջ։ 15. Ինչո՞ւ իմացականության համար անհրաժեշտ է մտածողությամբ վերամշակության յենթարկել փորձնական տվյալները։ 16. Ինչի՞ վրա յե հենվում թեորիայի և պրակտիկայի միասնությունը դիալեկտիկական մատերիալիզմում։	Семковский—«Марксистская хрестоматия».«Непознаваемая вещь в себе», стр.648—649. «Марксистская хрестом.». «Явления и вещи в себе», стр. 649—650.	բ) Բացարձակ և հարաբերական ճշմարտության հարցը վճռելիս անհրաժեշտ է պարզել դիալեկտիկական հայացքի տարբերությունը, մի կողմից, մետաֆիզիկական տեսակետից (վորն ընդունում է միմիայն բացարձակ ճշմարտությունը) և, մյուս կողմից, — ռելատիվիզմի տեսակետից (վորն ընդունում է միմիայն հարաբերական ճշմարտությունը)։

III. «Առանց հեղափոխական թեորիայի չի կարող լինել նաև հեղափոխական գործողություն» (Լենին)։ Մարքսիստական փիլիսոփայությունն անտեսելը և նրա խեղաթյուրումը գործնականում հանգեցնում են ոպորտունիզմին։ Դիալեկտիկական մատերիալիզմը, ճշտորեն արտացոլելով իրականությունը, ղեկավար է հանդիսանում գործնականի համար։ Կոմունիստական կուսակցություններն անողոք պայքար են մղում դիալեկտիկական մատերիալիզմի գռեհկացման ու խեղաթյուրման դեմ։

Ուժանդակ հարցեր	Գրականություն	Մեթոդիկ ցուցումներ
17. Ինչի՞ մեջ է կայանում դիալեկտիկական մատերիալիզմի նշանակությունը հեղափոխական շարժման համար։		Այստեղ անհրաժեշտ է պարզել դիալեկտիկական մատերիալիզմի, վորպես պրոլետարիատի հեղափոխական թեորիայի, դերը ինչպես և պայքարի անհրաժեշտությունը ռևիզիոնիզմի դեմ մարքսիստական փիլիսոփայության ընդգավառում։
18. Դուրս բերեք այն կապը, վոր գոյություն ունի փիլիսոփայության ընդգավառում ռևիզիոնիզմի և պրակտիկայում՝ ոպորտունիզմի միջև։		Համեմատել սոցիալ-դեմոկրատիայի և կոմունիստական կուսակցությունների վերաբերմունքը դեպի մարքսիզմի թեորիան (դեպի դիալեկտիկական մատերիալիզմը, կրոնական հարցերը)։
19. Ինչի՞ դիալեկտիկական մատերիալիզմի պրոպագանդը կոմունիստական կուսակցությունների անհրաժեշտ խնդիրն է հանդիսանում։		

Ստուգողական հարցեր.

1. Ինչո՞ւ դիալեկտիկական մատերիալիզմն ընդունում է նյութի և գիտակցության միասնությունը, և վոչ նրանց նույնությունը։

2. Վորո՞նք են դիալեկտիկական մատերիալիզմի խմացականության թեորիայի հիմնական սկզբունքները։

3. Ցույց տվեք իդեալիզմի սնանկությունը գիտության տեսակետից և նրա կապը կրոնական պատկերացումների հետ։

Լրացուցիչ գրականություն

(Վոչ պարտադիր)

1. *Семковский* - «Марксистская хрестоматия».
Энгельс—из «Л. Фейербаха», стр. 615—617, 640—642, 588—591
2. *К. Маркс* - «Тезисы о Фейербахе», стр. 644—646.
3. *Адоратский*—«Исторический материализм». Хрестоматия по Ленину, стр. 57—62, 63--72, 111—120.

Դրականություն հայերեն լեզվով.

1. Ա. Մելիք—«Փիլիսոփայական մատերիալիզմ» . . . գլ. 7, եջ 52—56
2. Պլեխանով—«Պատմության մատերիալիստական ըմբռնումն» . . . . . գլ. 8, եջ 56—64
Դասախոսություն առաջին, ... եջ 9—26
3. Պլեխանով—«Մարքսիզմի հիմնական խնդիրները» . . . եջ 13—35
4. «Մարքսիստական քրեստոմատիա,» . . . . . եջ177—188
5. Պլեխանով,—«Յերկերի ժողովածու», III հատոր, գլուխ I, . եջ 3—15

Տպարան հրատ. «Զարյա Վոստոկա»-յի.

Պատ. № 1739. Գլավլիտ № 1504. Տիրաժ 500.

1930/56

509

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА
ՀՍՍՌ Арм. ССР
ИМ. А. МЯСНИКЯНА
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

IM
2-53

2001

ՀՀ Ազգային գրադարան
NL0024647